№ 122 Յուլիսի 9 Ուրբաթ

1882

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Յուլիսի 9 Ուրբաթ № 122

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի հարցմունք։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ղզլարից։ Նամակ Շամախուց։ Նամակ Խմբագրին։ Նեկրին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Եւրօպական կոնֆերէնցիա։ Եգիպտոս։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խամսայի Մէլիքութիւններ։

ՄԻ ՀԱՐՑՄՈՒՆՔ

„Մշակի“ ներկայ համարում Բագուից հաղորդված լուրի առիթով մենք կուզենայինք մի հարցմունք առաջարկել մեր մամուլի կղերական կուսակցութեանը։

Ի՞նչի են այդքան աղմուկներ գցում, երբ մի անզարգացած, մոլեռանդութեան մէջ մեծացած կաթոլիկ կամ բողոքական հայ, փոխած լինելով իր պապերի կրօնը, կարծում է թէ ազգութիւնն էլ է փոխել և այդ պատճառով իրան Ֆրանգ կամ Ն է մեց է ասում, քանի որ հայ-լուսաւորչականների մէջ էլ գտնվում են, նոյն իսկ մեր համալսարանական, բարձր ուսում ստացածների մէջ, այնպիսի անձինք, որոնք ուրանում են իրանց ազգութիւնը, արհամարհանքով են վերաբերվում դէպի հայոց լեզուն, շպրտում են գրադարանից հայոց գրքեր, ասելով թէ հայերէնը, մայրենի լեզուն, տուելորդ մի բան է և բաւական է եթէ իմանանք այս կամ այն օտար լեզուն։

Ուրեմն այդ տեսակ վնասակար և անզարգացած, ազգայնութեան գաղափարի վրա ոչինչ հասկացողութիւն չունեցող անձինք ամեն դաւանութեան մէջն են գտնվում և մամուլի պարտքն է այդ տեսակներին մատնացոյց անել հասարակական կարծիքին, նրանց բարոյապէս հալածել և ներելի չէ, երբ մամուլը իր անձնական շահերի համար յեղաշրջում է ճշմարտութիւնը, հաւատացնելով որ իր ազգութեան ուրանալը յատուկ է միմիայն կաթոլիկ կամ աւետարանական հային։

Վստահութեամբ կարող ենք ասել որ օրինակ Թիֆլիսի 40 հազար հայ բնակիչների երեք քառորդը պատկանում են այն անձանց թիւին, որոնք ամենամեծ արհամարհանքով են վերաբերվում դէպի իրանց ազգութիւնը, դէպի մայրենի լեզուն, անողորմաբար հալածելով հայերէնի դոյծածութիւնը իրանց ընտանիքներում, ամենամեծ արհամարհանքով, ինչպէս և Բագուի հայ պարոնը, որ դժբաղդապէս բացառութիւն չէ, շպրտում են հայոց գիրք, հայոց լրագիր, երբ պատահմամբ նրանց ձեռքն է ընկնում։

Բայց մեր կղերական մամուլը շատ լաւ գիտէ որ Թիֆլիսի հայ բնակիչները բոլորն էլ լուսաւորչական են, ուրեմն պատկանում են այն եկեղեցուն, որ մեր մամուլի ասելով, միակ ոյժ է որ պահպանել է ազգութիւնը։

Մենք աներկիւղ կասենք որ Թիֆլիսեցի հայ-լուսաւորչականը աւելի անհաշտ թշնամի է իր ազգութեան, քան թէ ալէքսանդրապօլցի հայ-կաթոլիկը, կամ Շամախու հայ-աւետարանականը։

Մեր կղերական մամուլը, որի պաշտօնն է մոլորեցնել ամբոխը, գրգռել նրա մէջ ֆանատիկոսութիւնը, սպանել նրա մէջ լոգիկա, պահպանել նրան միտական խաւարի մէջ, որպէս զի նա երբէք լոյսի ճառագայթը չը տեսնի, չը զարթնի, չարթնանայ, այդ մամուլը հաւատացնում է որ մեր եկեղեցին է պահպանել մեր ազգութիւնը։ Այն փաստը որ հայ-լուսաւորչականները ամենամեծ թշնամի են իրանց ազգութեան, ամենալաւ ապացոյց է որ ոչ մի եկեղեցի ընդունակ չէ պահպանել ազգութիւնը, որ ազգութեան պահպանողը ոչ թէ եկեղեցին է, այլ բոլորովին ուրիշ գործիչներ, ուրիշ ֆակտորներ։

Կրկնում ենք մեր հարցմունքը։ Փառք Աստուծոյ, Թիֆլիսի 40 հազար հայ բնակիչները բոլորն էլ լուսաւորչական են, բայց ի՞նչպէս է եղել, որ նրանցից երեք քառորդը, 30 հազարը, վստահութեամբ կարելի է ասել, թշնամի են իրանց ազգութեան, իսկ մնացած 10 հազարը միայն անտարբեր են դէպի ամեն բան, ինչ որ հայութեան է վերաբերվում։

Ո՞ւր մնաց, ուրեմն, այն սկզբունքը թէ եկեղեցին պահպանել է ազգութիւնը, երբ որ այդ ազգային եկեղեցուն պատկանողները իրանց ազգութեան թշնամիների կամ դոնէ դէպի իրանց ազգութիւնը անտարբերների ամենամեծ կօնտինգէնտ են ներկայացնում։

Պատասխանը միայն այն կարող է լինել, որ ոչ մի ազգի պատմութեան, ոչ մի պերիօդի մէջ, երբէք ոչ մի եկեղեցի չէ պահպանել ոչ մի ազգութիւն, այլ ամեն ազգութեան գոյութեան գլխաւոր ֆակտորները միշտ եղել են հողը և մայրենի լեզուն։

Իսկ եկեղեցին միշտ անզօր է եղել կապել ազգը հայրենի հողի հետ, տարածել ազգի մէջ մայրենի լեզուն։ Մինչև հիմա հոգևորականները ուրանում են մեր մայրենի կենդանի լեզուն, և յամառում են մեզ հետ խօսել այնպիսի լեզուով, որ մենք չենք հասկանում, մեռած, հին լեզուով։ Նոյնպէս և հողի հետ մեզ կապելու համար հոգևորականութիւնը երբէք ոչինչ չէ արել և չէր էլ կարող անել, քանի որ նրա պրինցիպը, նրա օգուտները, շահերը այդ չէին պահանջում։ ընդհակառակն նրան միշտ ձեռնտու էր ազգի գաղթականութիւնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

—

Յունիսի 28-ին

Սարսափելի փոթորիկ եկաւ մեր քաղաքի գլխին. թերեք գետը պատռելով իր թումբը դուրս եկաւ ափերից և ծածկեց 1/3 մասը մեր այգիների և կարելի է ասել ամենալաւ մասը. գոնէ մի այգի, որ պատկանում էր Իշխանեանցներին, Ղզլարի ամենագեղեցիկ այգին էր և արժէր մինչև 100,000 ռուբլի։ Այս բոլոր հարստութիւնը այժմ ջրի տակն է, և որովհետև ջուրը արդէն մէկ ամիս է կանգնած է այստեղ, ուստի որթերը սկսել են չորանալ։ Հաշվում են ջրի տակ մինչև 100 այգի, որ գնահատում են մինչև միլիոն ռուբլի։

Այս բոլոր վտանգը պատահեց մեր դումայի անտարբերութիւնից. հարկաւոր է ասել որ մեզանում վաղուց է որ գոյութիւն ունի ափեր ամրացնելու մի կոմիտէտ, որը հաստատված է տէրութիւնից. այս կոմիտէտը գտնվում է դումայի վարչութեան տակ և ունի մի քանի տասնեակ հազար ռուբլի եկամուտ և պարտաւոր է պաշտպանել Թերեքի թումբը 30 վերստ տարածութեամբ։ Բայց երևում է, որ համարեա ոչ մի բան չէ արած. թումբը այնքան վատ դրութեան մէջ է, որ զարմանք է թէ ջուրը մինչև այժմ ինչպէս չէ տարել բոլորը։

Ահա այս դրութեան մէջ, մեր բաղդից, երբ որ սաստիկ անձրևը բարձրացրեց Թերքի մակերևոյթը, թումբը պատռեց երկու տեղից. սկզբումը վտանգը մեծ չէր, այնպէս որ հնչին բանով կարելի էր առաջն առնել. բայց մեր դուման քնած էր. պատռած տեղը երկու սաժէնից դառաւ տասը, ջուրը սպառնում էր քաղաքին և այգիներին, բայց մեր ձայնաւորները այդ ժամանակ գործ տեսնելու տեղ, պարապած էին վիճաբանութեամբ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

XL.

Մնում է մեզ մի քանի խօսք ասել Գիւլ-եաթաղ բերդի Մէլիք-Ալահվերդեան Մէլիք-Ռուստամի մասին, և մենք շուտով կը վերջացնենք Խամսայի մէլիքութիւնների հետ։

Ընթերցողը յիշում է, որ Մէլիք-Ռուստամը Խամսայի տիրապետող մէլիքների կարգից չէր, այլ Շուշի բերդի մահմեդական խաներին մատուցած ծառայութիւնների համար մէլիքութիւն ստացաւ։ Նա իր զօրքերով օգնեց Իբրահիմ-խանին Գանձակի պաշարման ժամանակ և Մէլիք-Մէջլումի սպանման պատճառը դարձաւ (տես. գլ. XXXIII)։ Նա Աղա-Մամադ-խանի սպանվելուց յետոյ օգնեց Իբրահիմ-խանին և վերջինը կրկին Շուշի բերդի տէրը դարձաւ (տես գլ. XXXIV)։ Նա ուրիշ շատ ծառայութիւններ կատարեց Շուշի բերդի բռնակալի օգտին ի վնաս հայոց մէլիքների,—այդ բոլորը իրանց տեղերում պատմել ենք։

Ղարաբաղի մէլիքների վերջին գաղթականութեան ժամանակ Մէլիք-Ռուստամը իր հայրենիքից չը հեռացաւ։ Նրա յարաբերութիւնները Շուշի բերդի Իբրահիմ-խանի հետ այնքան լաւ էին, որ նա կարիք չունէր օտար երկիրներում ապաստանութիւն որոնելու։ Բայց միւս կողմից նրան սպառնում էր մի վտանգ, այն էր Գանձակի Զաւատ-խանի վրէժխնդրութիւնը։

Զաւատ-խանը չէր կարող մոռանալ, որ նա Իբրահիմ-խանի հետ միանալով, պաշարեց իր բերդը, դաւաճանութեամբ իր աներ Ապրէս-աղային մոցրեց բերդի մէջ, տեղային հայերին ապստամբեցրեց իր դէմ, Մէլիք-Մէջլումին սպանել տուեց և այլն։

1799 թվին, այսինքն Մէլիք-Մէջլումի մահից երեք տարի յետոյ, Զաւատ-խանը յարմար ժամանակ գտաւ Մէլիք-Ռուստամից վրէժխնդիր լինելու։ Նա իր զօրապետներից մէկի առաջնորդութեամբ, որին կոչում էին Մըրդ-հաջի, որը աւելի հսկայ էր, քան թէ հասարակ մարդ, բազմաթիւ ասպատակներ է ուղարկում Մէլիք-Ռուստամի երկիրը աւերակ դարձնելու և նրան գերի բերելու համար։ Մէլիք-Ռուստամը այս լսելով, վեր է առնում իր ձիաւորների խումբը, և դուրս է գալիս թշնամու հանդէպ։ Մէլիքի հետ է լինում նրա քաջ նիզակակից տէր-Յարութիւն քահանան *)։ Նրանք հանդիպում են թշնամուն Սուլթանի տափ կոչված դաշտում **)։ Թշնամին մի քանի անգամ աւելի բազմաթիւ է լինում քան մէլիքի զօրքերը։ Բայց որովհետև այդ ժամանակվայ կռիւների մէջ հակառակ կողմերի բախտը վճռվում էր շատ անգամ առաջնորդող անձինքների մենամարտութեամբ, քան թէ զօրքերի հաւաքական պատերազմով, այդ պատճառով Մըրդ-հաջին կայծակի արագութեամբ նետվում է Մէլիք-Ռուստամի վրա։ Վերջինը ժամանակ չէ տալիս նրան իր մօտ հասնելու և հեռուից հրացանի գնտակով ցած է գլորում նրա ձին, և հսկան մնում է ձիու տակը։ Այդ միջոցին Մէլիք-Ռուստամը արծուի արագութեամբ մոտենում է հսկային, և մէլիքին մահացու վերք է պատճառում։ Այդ միջոցին վրա է հասնում մէլիքի նիզակակից տէր-Յարութիւնը, զտնում է նրան հոգեվարքի մէջ։ Թողնելով նրան նոյն դրութեան մէջ, յարձակվում է Մըրդ-հաջիի վրա և սպանում է նրան։ Բայց ինքն ևս սպանվում է նոյն կռվի մէջ, երբ կատաղած մահմեդականները տեսնելով իրանց առաջնորդի դիակը, աւելի սաստկացնում են կռիւը։

Մէլիք-Ռուստամի գլուխը կտրում են և տանում Գանձակ, նուիրում են նրա թշնամի Զաւատ-խանին, որից տեղային հայերը խնդրելով առնում են քաջ մարդու գլուխը, և թաղում են իրանց եկեղեցու դրան մօտ։ Իսկ մարմինը թաղվում է իր հայրենի Գիւլ-եաթաղ բերդի գերեզմանատանը *)։

Մէլիք-Ռուստամը որդի չը թողեց *), այդ պատճառով նրա մահից յետոյ մէլիք եղաւ նրա եղբօր Միրզա-բէկի որդի Ռովշանը։

Մէլիք-Ռովշանը իր նախորդների նման բարեկամ չը մնաց Շուշի բերդի խաներին և մասնակցում էր ռուսաց կռիւներին խաների դէմ։ Գանձակի պաշարման ժամանակ նա իր խումբով գտնվում էր իշ. Ցիցիանովի բանակի մէջ, և քաջութեամբ կռւում էր Զաւատ-խանի դէմ, որի հետ ունեցած թշնամութիւնը, թէ Մէլիք-Ռուստամի սպանման պատճառով և թէ առաջ, մեր ընթերցողներին յայտնի է։

Երբ իշ. Ցիցիանովը գրաւեց Գանձակը, Մէլիք-Ռովշանը թողեց Զրաբերդը և իր ընտանիքով տեղափոխվեցաւ այդ քաղաքը, վայելում էր իշ. Ցիցիանովի առանձին համակրութիւնը։

Այնուհետև նա շատ ծառայութիւններ արեց ռուսաց զօրքերին, թէ Նիւթապէս և թէ իր քաջ ձիաւորների խումբերով օգնելով նրանց։ Երբ պօլկօվնիկ Կարեագինը, Շուշի բերդի մօտ, ջարդվելով պարսից բազմաթիւ զօրքերից, փախաւ և ամրացաւ Շահբուլաղի բերդի **) մէջ, այստեղ նրա հրամանատարութեան ներքոյ յանձնված ռուսաց զօրագունդը, ամեն կողմից պաշարված պարսից զօրքերով, անպատճառ կը ոչնչանար քաղցածութիւնից, եթէ Մէլիք-Ռովշանը նրանց օգնու-

*) Այդ տէր-Յարութիւնը Աստուածատուր քահանայի որդին էր և նշանաւոր Դալի-Մահրասայի (Աւազ վարդապետի) տոհմիցն էր, Զրաբերդի Մեծշէն կոչված գիւղից, ուր մինչև այսօր ապրում են Դալի-Մահրասայի ժառանգները և յայտնի են իրանց քաջութեամբ։

**) Սուլթանի տափը գտնվում է Մարդակերտ գիւղի մօտ, Թարթար գետի աջ ափի մօտ։

*) Մէլիք-Ռուստամի և նրա քաջ նիզակակից տէր-Յարութիւն քահանայի շիրիմները կից են, դրած են միմեանց մօտ. երկուսի տապանաքարերը ևս կրում են մի և նոյն թուականը՝ հայոց ռ. մ. խ. ը. (1799)։

**) Մէլիքի մահից չորս ամիս յետոյ նրա կինը, Վարթ-խաթունը, ծնեց Բալա-բէկին։

*) Շահ-բուլաղի բերդը մի ամայի բերդ էր այդ ժամանակ, կառուցած Թառնադիւրտի (Տիգրանակերտի) հին աւերակների վրա։ Այդ բերդը շատ մօտ է Շուշի բերդին։

Ջանը տալաւորութիւն էր անում մարդու վրա երբ ժողովներում մի քանի առաջաւոր պարոններ, որոնց սեացրել էին վերջին ընտրութիւններում, հետևում էին խճճել հարցերը, որ քաղաքային վարչութիւնը վատ դրութեան մէջ դնեն. կարծես դրանք չէին կարող գտնել այս դէպքում թողնել իրանց անձնական հաշիւները և թէ խելքով, թէ փողով օգնել քաղաքին այս վտանգալի դրութեան մէջ:

Ինչ և իցէ, վերջապէս վճռեցին սկսել ջրի առաջ կապել. բայց ոչ կոմիտեում և ոչ ուղրավայում ոչ մի գրոշ չը կար. ինչ անել. վճռեցին պարտք վերցնել. բայց որովհետև օրէնքով քաղաքային վարչութիւնը առանց թոյլատրութեան իրաւունք չունի պարտք առնելու, ուստի դիմեցին հեռագրով Վլադիկավկազ նահանգապետին, բայց նա մերժեց խնդիրը, ասելով որ ինքը առանց բարձրագոյն իշխանութեան չէ կարող թոյլ տալ: Այսպէս ժամանակը անց էր կենում իսկ ջուրը իր գործը արդէն տեսնում էր և մի այդի միւսի ետևից կուլ էր տալիս: Վերջապէս դիմեցին քաղաքացիներին և առաջարկեցին, որ նրանք նուիրեն հարկաւոր դումարը, որը 10,000 ռուբլի էր: Սկսեցին ժողովարարութիւնը և ամօթ է ասել. այն քաղաքը, որ ամէն րոպէ կարող էր կորցնել միլիօնաւոր հարստութիւն, հազիւ կարողացաւ տալ 6000 ր. և չամաչեցին տեղիս ազատները մինչև անգամ այս չնչին դումարը պարտք առնելու համար ներկայացուցիչներ ուղարկել նահանգապետի մօտ, որը այդ ժամանակ անց էր կենում Ղզլարի մօտով: Բայց ինչ և իցէ ջրի առաջը մինչև այժմ չէ առած. նա ընթացք է չունել իր համար մեր այդիների լաւ մասի միջով գնում է և թափվում է ծովը: Եթէ չուտով թոյլ կը տան 10,000 ր. պարտք առնելը, յոյս կայ որ բանը չը վերջանայ միայն դրանով ինչ որ արդէն եղել է, իսկ եթէ ոչ, ով գիտէ, շատ կարելի է Ղզլարը իր ամբողջ այգիներով գոհ կերթայ ջրին: Եթէ մեր ճանաչողները այսքան անտարբեր չը լինէին, չէր պատահի այս վտանգը, որի համար բարոյապէս պարտաւոր են նրանք, որոնց քաղաքը յանձնել է իր ղեկավարութիւնը:

Կիլլի

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Յուլիսի 3-ին

Յունիս ամսի 27-ին, տեղւոյս Ս. Աստուածածնայ մայր եկեղեցում, ի ներկայութիւն խուռն բազմութեան արանց և կանանց, բազդ ունեցաւ քահանայ ձեռնադրվելու Բաղուի Մարդ. ընկ. դպրոցների ուսուցիչ, նաև «Սոխակի» հեղինակ պ. Աւագ Գրիգորեանցը: Ինչպէս տեղեկանում ենք հասատաւ աղբիւրներից, նորընծայ տէր Գրիգոր (Աւագ) երիտասարդ քահանան պիտի նշանակվի ոչ միայն իբրև ծխատէր քահանայ Բաղուայ ժողովրդի, այլ գլխաւորապէս իբրև մշակական կրօնուսոյց և ուսուցիչ հայոց լեզուի Մարդ. ընկ. երկսեռ դպրոցներում: Այդ առաջին անգամը չէ, որ մեր մէջ ուսումնասէր և արժանաւոր երիտասարդներ քահանայ ձեռնադրվելու ցանկութիւն են յայտնում. արժանաւոր քահանաներ ունենալու պահանջը նշան է ժողովրդի մտաւորապէս ու բարոյապէս զարգանալու ձգտողութեան: Բոլոր սրտից ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն տէր Գրիգորին. ցանկանում ենք, որ երիտասարդ քահանան շարունակէ նոր ուժով և նոր եռանդով իր ուսուցչական պաշտօնը՝ արծարծելով մանուկ սրտերի մէջ ազգային զգացումն, մարդկային բարձր սկզբունքներ, որոնցից զուրկ է տարաբաղդաբար այս բոպէիս մեր մանուկ սերունդը: Ահա սոքա են մեր ժողովրդի անկեղծալութիւնները, սոքա են ահա մեր փափաքները.... Յուսով ենք վերջապէս, որ նորընծայ քահանան՝ չը հետևելով Բաղուի այժմեան քահանաների ուտիլիտարական ուղղութեան ի վնաս տեղական հասարակական շահերի, պատրաստ կը լինի հասարակական օգտին ծառայելու մէջ մասնակցել, բայց միայն այն պայմանով, եթէ ընդհանուրի շահի հետ կցորդած է և նրա կենսական շահերը, երբ նա հասարակութեան ծառայելով, կարող է մի և նոյն ժամանակ և իր անձնական պիտոյքը հոգալ, երբ միով բանի կատարած կը լինի ամենայն սրբութեամբ հետևեալ հասարակական անհերքելի ճշմարտութիւնը. «Un pour tous,—tous pour un».

Ուրեմն, քաղցր է մեզ և ցանկալի—հաղորդել հայ-հասարակութեանը միշտ նորանոր լուրեր ազգային կեանքից, այնքան ևս զգուելի է մեզ ու միանգամայն անտանելի—հաղորդել միշտ արխուր դէպքեր մեր հասարակական կեանքից: Ցեղւոյս հայ-հասարակութեան մէջ ծագած խռովութիւնները և երկպառակութիւնները, որոնք գլուխ բարձրացրին տարաբաղդաբար այդ վերջին ժամանակներս տեղւոյս հոգևոր վարչութեան անտակտ վարմունքով և որոնց հետևանքը եղաւ անտարբերութիւն ու վերին աստիճանի անհոգութիւն դէպի եկեղեցական ու դպրոցական անխուսափելի և արդարացի պահանջները և դադարուն ամէն ազգօգուտ հասարակական շարժումներին,—այժմս էլի սկսել են նորից յուզվել այդ խռովութիւնները չնորհիւ տեղւոյս Հ. վարդապետի խայտառակ վարմունքի ու նրա փողոցային անվայել դիւցոցների, որոնք ուղղվում են այս կամ այն անձնաւորութեան: Զը գիտենք, ինչու տեղւոյս առաջնորդ Թադէոս եպիսկոպոսը թոյլ է տալիս իր monitor—վարդապետին անպատասխանատու հասարակութեան. ինչու նա չէ սանձահարում իր վարդապետի անսանձ կրքերը. չէ որ գրանով նա դարձան: Մէլիք-Բովչանը մտածեց հեռանալ Գանձակից: Նա իր հայրենիքը՝ Ջրաբերդ գնալ չը կարողացաւ, որովհետև Շուշի բերդի Իբրահիմ-խանի յաջորդ Մէհտի-խանի հետ նոյնպէս լաւ յարաբերութիւնների մէջ չէր: Կարեագինի անցքի պատճառով, նա հրաժարել էր իր վրա Շուշի բերդի խանների ատելութիւնը, որոնք թէև ռուսներին առերես հպատակութիւն էին ցոյց տալիս, բայց սրտով կապված էին պարսիկների հետ:

Իր անձնանուէր, բայց չը վարձատրված ծառայութիւնների համար վշտացած, Մէլիք-Բովչանը թողեց Գանձակը և գնաց Շաքի Դաշ-բուլաղ գիւղը, որ հիմնել էր մի ժամանակ (տես գլ. XXVII) նրա հօր եղբայր Մէլիք-Ռուստամը, և այնտեղ առանձնացաւ, իրան առժամանակ հեռու պահելով պատերազմի դաշտից: Դաշ-բուլաղում դեռ բնակվում էին Մէլիք-Ռուստամի Ջրաբերդից տարած հայ գաղթականները: Մէլիք-Բովչանը նրանց իր հպատակութեան ներքոյ առաց և խաղաղ կեանք էր վարում: Այնտեղ մի քանի տարուց յետոյ վախճանվեցաւ նա, այն վերքի պատճառած հիւանդութիւնից, որ ստացել էր նա Գանձակի կամուրջի վրա: Նա թողեց մի որդի Ալլահվերդի-բէկ անունով, որը այդ տոհմի մէջ Մէլիք-Ալլահվերդի II-ն էր *) որի հետ այդ տոհմի մէջ Մէլիքութիւնը վերջացաւ:

Խօսելով Կարեագինի անցքի մասին, մենք չենք կարող չը յիշել մի քաջ աղամարդի անունը, որը նշանաւոր եղաւ ռուսաց զանազան կռիւների մէջ:

*) Մէլիք-Ալլահվերդի II-ից մնացին երեք որդիներ՝ Միսայէլ-բէկ, Ղահրաման-բէկ և Մէջլում-բէկ:

հասարակութեան ուշադրութեան արժանի է խանգարում հասարակութեան անդորրութիւնը:

Զ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Շուշի, յուլիսի 2-ին

«Մշակի» № 114-ի մէջ ձեր յայտնած միտքը մեր բարձրագոյն ուսում ստացած երիտասարդների մասին, մի այնպիսի չշփոթելի ճշմարտութիւն է որը ոչ մի առողջ դատող մարդ չէ կարող հերքել: Եւ իրաւ, մի ցաւալի ճշմարտութիւն է դա, որ մեր երիտասարդները, ստանալով բարձր ուսում, մի և նոյն ժամանակ մոռանում են իրանց հայրենի երկիրը և սկսում են փառքի և պաշտօնի ետևից վազել: Մի և նոյն ժամանակը ինտելիգենցիայի բացակայութիւնը ժողովրդի մէջից նպաստում է ժողովուրդը խաւարի և մնոտիապաշտութեանց մէջ կաշկանդված մնալուն:—Ամբողջ Ղարաբաղում, որի գեղեցիկ օդը և բերրի հողը ամենքին յայտնի են, գտնվում են մեծ վիճակներ, բաղկացած բազմամարդ հայ գիւղերից, որոնք գտնվում են յետին տգիտութեան մէջ. դարևոր մնոտիապաշտութիւնները և այն գաղափարը, որին կուրօրէն հետևում է գիւղացին, և որը ասվում է «իր նախնիքների ճանապարհովը գնալը» —այս բոլորն են տեղական գիւղատնտեսական մեռած դրութեան գլխաւոր պատճառները: Պարարտ և պտղատու հողը առանց խնամքի մնակվում է հին նահապետական կերպով, երկրագործութիւնը, որ գիւղացիների ապրուստեան չնորհիւ դրված է այսպիսի անյարմար պայմանների մէջ, հազիւ է կարողանում լրացնել տեղական, մնային պահանջները: Ղարաբաղում դուք կը գտնէք բազմաթիւ գիւղեր, որոնց բնակիչները խորտրդի են դիմում դէպի մի որ և է տիրացու, որ կարողացել է յայտնվել սաղմոսի և ժամագրքի գիտութիւններով. շատ տեղերում այդպիսի տիրացուներ կամ տէրտէրներ իրանց ձեռքին ունեն բռնած տեղական մնոտեսութեան դեկը: Ի հարկէ, այդպիսիները եղած կամ չեղած,—մի և նոյն է:—Բայի սրանից գիւղացիները այժմ սովորել են մի ուրիշ տեսակ արհեստ. նրանք թողնում են իրանց արօրը ու ցանքը և թափառում են զանազան քաղաքներ հարստութիւն գտնելու համար: Առևտրական ոգին, ոսկի ժողովելու ագահութիւնը նրանց հալածում է իրանց գեղեցիկ դաշտերից. այն, ինչ որ կարելի է ձեռք բերել խաբէութեամբ և սուտ երդումներով, ռամիկ ժողովուրդը աւելի վեր է դասում, քան թէ երեսի քրտինքով հաց վաստակելը: Այս արհեստը օրից օր աւելանում է: Եւ այսպիսով տեղական հողագործութիւնը ընկնում է, գիւղացիների ձեռքից օրից օր անցնում է հարուստ վաչխառուների և կալուածատէրերի ձեռքը, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ սղտոր ջրում ձուկ որսողներ: Գիւղացիների մեծ մասը այդպիսի պարոնների ձեռքում դարձել են գործիքներ, որոնց շնորհով արհեստական կերպով սարքած թանգութիւններ են առաջ գալիս: Այս բանի առաջն առնելը, գիւղական անտեսութեան մի կանոնաւոր և ժամանակակից գիտութիւնների պահանջներին համեմատ դարկ տալը՝ մնում է մեր ուսեալ երիտասարդութեան վրա: Բայց ամէն հասկացող մարդ այժմ կրկնում է ձեր զեղեցիկ յօդուածում յայտնած այն ցաւալի ճշմարտութիւնը, որ ուսեալ մարդը, որ դուրս է գալիս որ և է շրջանից, այլ ևս յետ չէ նայում և թողնելով իր հայրենիքի վիճակը առանց դարմանի, իր քայլերը ուղղում է դէպի մեծ քաղաքները, դէպի նրանց փառքն ու պատիւը:

Գոհ սրտով է կարդում հասարակութիւնը «Մշակի» յօդուածները. մի դաղանի ոյժ որ ամենից աւել մօտեցնում է «Մշակը» ժողովրդի սրտին, նրանում է կայանում, որ այն ինչ որ մտածում է ինքը ժողովուրդը, ինչ որ նա համարում է իր համար լաւ և օգտակար բան, անմիջապէս յայտնվում է «Մշակի» առաջնորդող յօդուածներում: —Բայց ափսոս, որ մեր մամուլը դեռ չէ կարողացել բռնել այն դիրքը, որի շնորհիւ միւս ազգութիւնների մամուլի նման կարողանար շարժել ժողովուրդը այն փրկարար ուղղութեամբ, որին ինքն է ծառայում:—

Ա. Բաբախանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայրաքաղաքի լրագիրներում կարդում ենք որ թագաղրութեան բոլոր պատրաստութիւնները արդէն վերջացած են, պալատական հանդէսների և ժողովրդական զբօսանքների ծրագիրը նոյնպէս վերջնականապէս մշակված է:

—

Վերջին ժամանակ, ինչպէս յայտնի է, շաքարը Ռուսաստանում շատ թանգացաւ: Սորա պատճառը լրագիրները բացատրում են հետևեալ կերպով: Մի քանի հարուստ գործարանատէր հրէաների դաղթելուց յետոյ, գործարաններից մի քանիսները փակվեցան, իսկ մնացած գործարանատէրերը իրանց մէջ խօսք կապելով, թանգացրին շաքարը: Միայն Բրօդսկի գործարանատէրը այս դէպքից օգուտ քաղելով, կարճ միջոցում 10 միլիոն ռուբլ վաստակեց: Ինկատի ունենալով այս հանգամանքը, Օդեսայի վաճառականները խնդիրք ներկայացրին ֆինանսների մինիստրին, որ արտասահմանից բերվող շաքարի վրա մաքսը փոքրացնի, որպէս զի հնար լինի շաքարի գինը պակասեցնել ու գործարանատէրերի հետ մրցել: Բայց ֆինանսների մինիստրը յարմար չը համարեց շաքարի վրա մաքս փոքրացնել, միայն կարգադրութիւն արեց որ այսուհետև շաքարի մաքսը ոսկու տեղ, թղթադրամով վճարվի: Այս կարգադրութիւն չը հասցնէր: Նա իր ձիաւորների խումբով պատառեց, անցաւ պարսից զօրքերի միջով, և Կարեագինի զօրաղնդին ուտեստի պաշար հասցրեց:

Այդ բոլորը այն աստիճան հռչակեցին Մէլիք-Բովչանի անունը, որ ռուսները կամենում էին ուղարկել նրան իր ձիաւորների հետ դէպի Կարսի կողմերը տաճկաց սահմանների վրա: Երբ նա պատրաստվել էր գնալու, մի գիշեր Գանձակի կամուրջից անցկենալու միջոցին, անյայտ ձեռքից հրացանի մի գնտակ արձակվեցաւ և նա մէջքից վերք ստացաւ:

Մէլիք-Բովչանը ոչ ոքի վրա չէր կարող կասկածել, բացի Մէլիք-Մէջլումի որդի փոքր Մէլիք-Աթամից, որ այդ ժամանակ Գանձակում էր գտնվում: Հին տոհմային թշնամութիւնը նորից զրգռվեցաւ երկու տիսերիմ ընտանիքների մէջ, որոնք, որպէս տեսանք մեր պատմութեան ընթացքում, շատ չարիքներ էին գործել միմեանց դէմ: Մէլիք-Բովչանը գանգատվեց և Գանձակի ռուս բերդապահը կալանաւորեց փոքր Մէլիք-Աթամին: Բայց երբ ոչինչ չը հաստատվեցաւ, մի քանի օրից յետոյ Մէլիք-Աթամին արձակեցին: Այդ սատիկ վիրաւորեց Մէլիք-Բովչանին և նա բողոքեց ռուսաց բարձր կառավարութեանը բերդապահի դէմ: Վերջինս սատիկ յանդիմանութիւն ստացաւ և մի քանի օր մնային բանտարկութեան ենթարկվեցաւ:

Բայց երբ իշ. Ցիցիանովը Բաղուի մօտ սպանվեցաւ, այնուհետև Մէլիք-Բովչանը կորցրեց իր պաշտպանին, և նրա յարաբերութիւնները Գանձակի բերդապահի հետ հետզհետէ թշնամական դարձան: Մէլիք-Բովչանը մտածեց հեռանալ Գանձակից: Նա իր հայրենիքը՝ Ջրաբերդ գնալ չը կարողացաւ, որովհետև Շուշի բերդի Իբրահիմ-խանի յաջորդ Մէհտի-խանի հետ նոյնպէս լաւ յարաբերութիւնների մէջ չէր: Կարեագինի անցքի պատճառով, նա հրաժարել էր իր վրա Շուշի բերդի խանների ատելութիւնը, որոնք թէև ռուսներին առերես հպատակութիւն էին ցոյց տալիս, բայց սրտով կապված էին պարսիկների հետ:

Իր անձնանուէր, բայց չը վարձատրված ծառայութիւնների համար վշտացած, Մէլիք-Բովչանը թողեց Գանձակը և գնաց Շաքի Դաշ-բուլաղ գիւղը, որ հիմնել էր մի ժամանակ (տես գլ. XXVII) նրա հօր եղբայր Մէլիք-Ռուստամը, և այնտեղ առանձնացաւ, իրան առժամանակ հեռու պահելով պատերազմի դաշտից: Դաշ-բուլաղում դեռ բնակվում էին Մէլիք-Ռուստամի Ջրաբերդից տարած հայ գաղթականները: Մէլիք-Բովչանը նրանց իր հպատակութեան ներքոյ առաց և խաղաղ կեանք էր վարում: Այնտեղ մի քանի տարուց յետոյ վախճանվեցաւ նա, այն վերքի պատճառած հիւանդութիւնից, որ ստացել էր նա Գանձակի կամուրջի վրա: Նա թողեց մի որդի Ալլահվերդի-բէկ անունով, որը այդ տոհմի մէջ Մէլիք-Ալլահվերդի II-ն էր *) որի հետ այդ տոհմի մէջ Մէլիքութիւնը վերջացաւ:

Խօսելով Կարեագինի անցքի մասին, մենք չենք կարող չը յիշել մի քաջ աղամարդի անունը, որը նշանաւոր եղաւ ռուսաց զանազան կռիւների մէջ:

*) Մէլիք-Ալլահվերդի II-ից մնացին երեք որդիներ՝ Միսայէլ-բէկ, Ղահրաման-բէկ և Մէջլում-բէկ:

Դա էր կապիտան Մէլիք-Վանի Աթաբէկեանը:

Թէև Աթաբէկեանները հայոց հին ազնուականների ծագումից էին, բայց Վանիի հայրը, զարգար Թունին (Յարութիւն) մի հասարակ արհեստաւոր էր, պարապվում էր ոսկերչութեամբ: Վանին իր պատանեկութեան հասակում աշխատում էր հօր արհեստանոցում և նրա լաւ օգնականն էր: Բայց այդ զբաղմունքը շուտով ձանձրացրեց նրան, երբ Ղարաբաղում ամէն րոպէ լսվում էր զէնքի շառաչիւնի ձայնը, որտում էր պատերազմների աղմուկը,—նրա տոհմային արիւնը եռեկաւ, մտածեց թողնել ոսկերչի փոքրն ու մուրճը, վճռեց զէնք կրել և նեռվել կռիւի դաշտը: Նա առանց իր գիտաւորութիւնը յայտնելու իր ծնողներին, ծածուկ հեռացաւ հայրենի տնից: Մի ժամանակ խմացան, որ Վանին Ջրաբերդի Մէլիք-Բովչանի մօտ ծառայութեան է մտել, նրա հեծելազօրքի խումբերից մէկի գլխաւորն է դարձել և կոչվում է Վանի իւզբաշի (հարիւրապետ Վանի):

1804 թուին Ջրաբերդի բնակիչներից 300 ընտանիք, Իբրահիմ-խանի զաղանութիւնից ազատվելու համար, գաղթեցին Գանձակ և բնակվեցան այդ քաղաքի չրջակայքում: Ցօթի և անսովոր կլիմայի պատճառով նոյն տարվայ ամառը այդ գաղթականներից մօտ 500 հոգի մեռան, մնացածները փախան Գանձակի գաւառի Ոսկանապատ գիւղը, ուր օդը համեմատաբար աւելի հովասուն էր:

Այդ գաղթականների հետ գտնվում էր և Վանի իւզբաշին: Գանձակում նա ծանօթացաւ պօլիտիկական Կարեագինի հետ այն ժամանակ, երբ Կարեագինին հրամայված էր Շուշի բերդին օգնութեան հասնել:—Դա այն ժամանակն էր (1806) երբ պարսից թագաժառանգ Աբաս-Միրզան բազմաթիւ զօրքերով պաշարել էր Շուշի բերդը, երբ տեղային Իբրահիմ-խանը, թէև ռուսաց կառավարութեանը հպատակութեան երդում էր տուել, բայց հէնց որ Աբաս-Միրզայի զօրքերը մօտեցան Շուշի բերդին, նա իր ընտանիքով դիմեց ռուսաց նենգաւոր թշնամու՝ Աբաս-Միրզայի բանակը և կէս ճանապարհի վրա սպանվեցաւ Մէլիք-Ջումշուդի և մայիոր Լիսանեվիչի ձեռքով (տես գլ. XXXIX): Բայց Շուշին դարձեալ պաշարված մընաց Աբաս-Միրզայի բազմաթիւ զօրքերով: Մայիոր Լիսանեվիչ և Մէլիք-Ջումշուդը, փակված բերդի մէջ, ունէին իրանց ձեռքի տակ խիստ անշան թիւով զինուորներ թշնամուն ընդդիմադրելու համար: Նրանց գլխաւորապէս օգնում էին բերդի մէջ բնակվող հայերը և դրսից օգնութիւն էին սպասում:

Օգնութիւնը պիտի հասցնէր պօլիտիկ Կարեագինը, որը արդէն Գանձակից ճանապարհ էր ընկել և հայ հեծելախումբով նրան առաջնորդում էր Վանի իւզբաշին: Ռուսաց զօրախումբը բաղկացած էր 600 զինուորներից և ունէին 2 թնդանօթներ միայն: Նրանք Գարգար գետի մօտ հանդիպեցին պարսից առաջապահ զօրքերին, թիւով աւելի քան 10,000, որ գտնվում էին Փիր-Ղուլի խանի հրամանատարութեան ներքոյ: Կռիւը բակվեցաւ յիշեալ գետի ափերի մօտ: Զը նայելով, որ թշնամու զօրքը թիւով անհամեմատ աւելի էր, քան թէ ռուսաց զինուորները և Վանի իւզբաշու հեծելախումբը, այսու ամենայնիւ, պարսիկները սկզբում սարսափելի կերպով ջարդվեցան,

դրութիւնը անշուշտ կը պակասեցնի չաբարի գինը:

—

Մեզ հաղորդում են հետևեալը: «Մինչդեռ Թիֆլիսի փողոցների մեծ մասը ծածկված են անտանելի թոզով, որ խեղդում է անցնողներին, մեր քաղաքային վարչութիւնը 2,000 բուրլ է նշանակել միմիայն Գօլովինսկի պրոսպեկտի վրա գտնվող Բելօի տանից մինչև երկաթուղու կայարանը անցնող ճանապարհը ջրելու համար: Իսկ մնացած փողոցները մնում են նոյն դրութեան մէջ:»

—

Հալաբարի խօջիմանքի գերեզմանոցը այս րոպէիս մի անախորժ տեսարան է ներկայացնում: Յուլիսի 5-ին, երկուշաբթի, Մեռելոցի օրը, տիրացուները գնացած լինելով քահանաների հետ գերեզմաններն օրհնելու, անզգուշութեամբ բուրվառներից վայր են ածում կրակը և խոտը սկըսում է այրվել: Վնասված են նոյնպէս մի քանի փայտեայ վանդակներ:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ հայոց Մարդասիրական Ընկերութեան ընթերցարանում ոչ մի հայերէն գիրք չը կայ: Երեք մեծ պահարաններ ռուսերէն գրքերով լի են: Ընթերցարանի կառավարիչը, որ մի և նոյն ժամանակ խորհրդի անդամ է, չպարում է արհամարհանքով հայոց գրքերը, ասելով թէ դրանք ասելորդ են, քանի որ հայը կարող է օտար լեզուով կարդալ: Պարոնը մի և նոյն ժամանակ բէալական գիմնազիայի ուսուցիչ է և մինչև այժմ չէ հասկացել մայրենի լեզուի անհրաժեշտութիւնը ամեն ազգի համար, որպէս զի այդ ազգը արժանի լինի ազգ կոչվելու: Ահա այդ դրութեան մէջն է ընթերցարանը, ասելացնում է թղթակիցը, այն ընթերցարանը որ հիմնել և պահպանում են իրանք հայերը և որի նպատակն է հայերի մէջ հայոց լեզուի ընթերցանութիւնը տարածել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՕՊԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ

—

„Times“ լրագրի Փարիզի թղթակիցը հաղորդում է, որ անկարելի է յուսալ Թիւրքիայի անմիջական միջամտութեան վրա եգիպտական գործերին, եթէ մինչև անգամ նա ընդունի եւրօպական պետութիւնների առաջարկութիւնը: Սուլթանից կարճառօտ պատասխանի են ապասում՝ այո թէ ոչ: Եթէ Բ. Դուռը բացասական պատասխան կը տայ, ընդհանուր եւրօպական միջամտութիւնը որոշելու համար կոնֆերենցիայի մի նիստը բաւական է: Այնուհետև կոնֆերենցիան կը փակէ իր նիստերը և կը յանձնէ գործող պետութիւններին որոշել գործերի դրութիւնը: Պաշտօնական գօկումենտների հիման վրա, որոնք վերաբերվում են վերջին ժամանակներին, դժուար չէ համոզվել, որ կոնֆերենցիայի քննութեանը առաջարկված հարցը փոխեց իր բնաւորութիւնը: Կոնֆերենցիան այն նպատակով հաւաքվեցաւ, որ կարծում էին, թէ եգիպտական հարցի լուծումը անհրաժեշտ է Կ. Պոլսի մէջ վճռել և թէ բաւական է խնդրել սուլթանին միջամտութեան մասին, որ այն ժամանակ կարելի էին համարում: „Times“ լրագրի Փարիզի թղթակիցը հաւատացնում է, որ իշխան Բիսմարկն էլ այդ կարծիքի էր և հակված էր դէպի հարցի այդ կերպ լուծելը: Բայց անցքերը խանդարեցին եւրօպական քաղաքագէտների հաշիւները: Յայտնվեցաւ, որ սուլթան այնպէս չէ տիրապետում գործերի դրութեանը Կայիրէի մէջ, ինչպէս կարծում էին Եւրօպայի մէջ և ինչպէս ինքն էլ երեւակայում էր: Արաբի-փաշայի անսպասելի ընդդիմադրութիւնը սուլթանի հրամաններին, հարցին նոր ուղղութիւն տուեց: Բ. Դուռը նկատեց, որ ինքը գժուար դրութեան մէջ է մի կողմից Եւրօպայի առաջ, իսկ միւս կողմից եգիպտական զինուորական կուսակցութեան առաջ և ցոյց տուեց, որ անպայման հրաժարվում է եգիպտական գործերին միջամտելուց: Դրանից յետոյ կոնֆերենցիայի դերը արմատականապէս փոխվեցաւ: Նա սկզբից դումարվեցաւ այն նպատակով, որ դրդէ Բ. Դրանը միջամտել և որ այդ միջամտութեանը եւրօպական յանձնարարութեան ձև տայ, իսկ յետոյ ինքը ստիպված եղաւ նախատեսել Բ. Դրան մերժումը և հոդալ եգիպտոսի մէջ կարգապահութեան վերականգնման մասին:

Կ. Պոլսից ստացված տեղեկութիւններից երևում է, որ սուլթանը անպայման հրաժարվում է իր զօրքերը եգիպտոս ուղարկելուց: Կոնֆերենցիան այդ մասին դեռ ևս պաշտօնական առաջարկութիւն չէ արել Բ. Դրանը: Այդ առաջարկութիւնը կանվի այն ժամանակ, երբ համաձայնութիւն կը կայանայ եւրօպական պետութիւններից մէկի միջամտութեան մասին Թիւրքիայի փոխարէն: Դեռ ևս յոյս ունեն, որ սուլթան, ի նկատի առնելով այդ բանը, վերջին րոպէում կը տայ իր համաձայնութիւնը: Անգլիայի զինաւորութիւնները Բ. Դուռը հասարակ ցոյց էր համարում:

—

ԵԳԻՊՏՈՍ

—

Ալէքսանդրիայի ռմբակոծումն սկսվեցաւ, գրում է „Голосъ“: Ակներև է, որ Անգլիան այդ գործը մի քանի օր առաջ էր վճռել, որովհետև ծովապետ Սէյմուր, բանակցելով Ալէքսանդրիայի հրամանատարի հետ, գործը այնպէս տարաւ, որ նրա խաղաղ վախճանը անկարելի էր: Ալէքսանդրիայի ամրոցների 24 ժամվայ ընթացքում մաքրելու և նրանց „ժամանակաւորապէս“ Անգլիային յանձնելու պահանջները այն նպատակով էին արված, որ մերժումն ստացվի, իսկ վերջին գործը առիթ էր տալիս անգլիական նաւատորմին սկսել թշնամական գործողութիւնները: Դեռ յունիսի 29-ին տեսնվեցան վերջնական բոլոր պատրաստութիւնները: Ջանազան պետութիւնների պատերազմական նաւերը, հեռանալով անգլիական նաւատորմին, դուրս եկան ներքին նաւահանգստից, որի մուտքի պահպանելու համար մնաց անգլիական զրահակիր նաւը: Անգլիական նաւերը բռնեցին առաջուց որոշած դիրքերը:

Անգլիացիների պատերազմական գործողութիւնները Ալէքսանդրիայի դէմ սկսվեցան բոլոր պետութիւնների նաւերի ներկայութեամբ, բացի ֆրանսիական նաւատորմից, որ „սկզբնական համաձայնութեամբ“ անգլիական ծովապետի հետ դընաց Պորտ-Սայիդ:

Այդ շարժումը զանազան կերպով կարելի է մեկնել: Ալէքսանդրիայի ջրերի մէջ եղած ֆրանսիական նաւատորմը թուով ամենքից ուժեղ էր: Այդ հիման վրա ծովապետ Սէյմուր կարող էր կարծել, որ նա աւելի լաւ կարող է պահպանել Պորտ-Սայիդ և մինչև անգամ այնտեղ զօրքեր ափ իջեցնել: Սուէզի ջրանցքի համար անգլիացիները չէին կարող անհանգիստ լինել, որովհետև վերջին տեղեկութիւններից երևում է, որ նրան պահպանում է մի զօրեղ անգլիական զրահակիր և մի քանի այլ նաւեր: Այդպիսով շատ հաւանական է թվում անգլիացիների կողմից Ալէքսանդրիայի մէջ, իսկ ֆրանսիացիների կողմից Պորտ-Սայիդի մէջ համաձայն գործողութիւնները: Բայց դարձեալ այլ մեկնութիւն էլ կարելի է տալ: Վերջին ժամանակներում լուր էր տարածված, որ ֆրանսիական կառավարութիւնը չէ համակրում Ալէքսանդրիայի ռմբակոծութեանը: Կային մինչև անգամ այնպիսի անձինք, որոնք հաւատացնում էին, թէ ֆրանսիական նաւատորմը Ալէքսանդրիայի մէջ դիտմամբ այնպիսի դիրք է բռնել, որպէս զի կարողանայ դժուարացնել անգլիացիների գործողութիւնները: Ֆրանսիական նաւատորմի հեռանալը Պորտ-Սայիդ այդ տեսակէտից կարելի է մեկնել իբրև բողոք ֆրանսիայի կողմից, թէպէտ դժուար է հասկանալ, թէ ինչ միտք կարող է ունենալ այդպիսի բողոքը, քանի որ մնացած բոլոր պետութիւնների նաւերը մնացին Ալէքսանդրիայի առաջ:

Այսպէս թէ այնպէս եգիպտական հարցը այսուհետև նոր պատկեր է ստանում: Կ. Պոլսի կոնֆերենցիան դիպլոմատիային յատուկ դանդաղութեամբ դեռ նոր էր պատրաստվում առաջարկել Թիւրքիային զինաւորված միջամտութիւնը: Անցքերը դիպլոմատների ընդունած գործողութիւնների ձևի առաջն առան: Եթէ կոնֆերենցիան մինչև անգամ կանէ այդպիսի առաջարկութիւն, սուլթանը անկասկած կը պատասխանի, որ նա այլ ևս միջամտելու պէտք չունի, քանի որ Անգլիայի միջամտութիւնը կատարված փաստ է:

Դժուար է այժմ որոշել, թէ Թիւրքաց կառավարութիւնը ինչպէս կը վերաբերվի կատարված այդ իրողութեանը: Անկարելի է կասկածել որ Անգլիայի վարմունքը դիպլոմատական և միջազգային տեսակէտից անկանոն է: Անգլիական կառավարութիւնը պատերազմական գործողութիւններ սկսեց մի երկրի դէմ, որ գտնվում է սուլթանի բարձր իշխանութեան տակ, այսինքն մի թագաւորի իշխանութեան տակ, որի յարաբերութիւնները անգլիական կառավարութեան հետ բարեկամական են: Այնուամենայնիւ դիրքը անորոշ կը պակասեցնի չաբարի գինը:

—

Մեզ հաղորդում են հետևեալը: «Մինչդեռ Թիֆլիսի փողոցների մեծ մասը ծածկված են անտանելի թոզով, որ խեղդում է անցնողներին, մեր քաղաքային վարչութիւնը 2,000 բուրլ է նշանակել միմիայն Գօլովինսկի պրոսպեկտի վրա գտնվող Բելօի տանից մինչև երկաթուղու կայարանը անցնող ճանապարհը ջրելու համար: Իսկ մնացած փողոցները մնում են նոյն դրութեան մէջ:»

—

Հալաբարի խօջիմանքի գերեզմանոցը այս րոպէիս մի անախորժ տեսարան է ներկայացնում: Յուլիսի 5-ին, երկուշաբթի, Մեռելոցի օրը, տիրացուները գնացած լինելով քահանաների հետ գերեզմաններն օրհնելու, անզգուշութեամբ բուրվառներից վայր են ածում կրակը և խոտը սկըսում է այրվել: Վնասված են նոյնպէս մի քանի փայտեայ վանդակներ:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ հայոց Մարդասիրական Ընկերութեան ընթերցարանում ոչ մի հայերէն գիրք չը կայ: Երեք մեծ պահարաններ ռուսերէն գրքերով լի են: Ընթերցարանի կառավարիչը, որ մի և նոյն ժամանակ խորհրդի անդամ է, չպարում է արհամարհանքով հայոց գրքերը, ասելով թէ դրանք ասելորդ են, քանի որ հայը կարող է օտար լեզուով կարդալ: Պարոնը մի և նոյն ժամանակ բէալական գիմնազիայի ուսուցիչ է և մինչև այժմ չէ հասկացել մայրենի լեզուի անհրաժեշտութիւնը ամեն ազգի համար, որպէս զի այդ ազգը արժանի լինի ազգ կոչվելու: Ահա այդ դրութեան մէջն է ընթերցարանը, ասելացնում է թղթակիցը, այն ընթերցարանը որ հիմնել և պահպանում են իրանք հայերը և որի նպատակն է հայերի մէջ հայոց լեզուի ընթերցանութիւնը տարածել:

և իրանց թնդանօթները և այլ ռազմամթերքը թողնելով պատերազմի դաշտի վրա, պատրաստվում էին փախչել, երբ նրանց օգնութեան հասաւ ինքը Աբաս-Միրզան առելի բազմաթիւ զօրքերով: Վանի իշխաչու հեծելախումբը և ռուսաց զինուորները մի քանի օր քաջութեամբ պաշտպանվում էին, բայց ինչ կարող էր անել մի բուռն զօրքը Աբաս-Միրզայի անգին բազմութեան դէմ: Կարևագինը վերք ստացաւ. նրա զինուորներից կէսը չը մնաց, մեծ մասը ընկան կռիվի դաշտում, մնացածները ամրացան մերձակայ Շահբուլաղի ամայի բերդում *):

Ռուսաց զօրքը լոլորովին կը ոչնչանար այդ ամայի բերդի մէջ, թէ քաղցածութիւնից և թէ թշնամու կրակից, եթէ ութն օրվայ սարսափելի պաշարումից յետոյ Վանի իշխաչին նրանց դիւերով դուրս չը բերէր այնտեղից և չազատէր բոլորին, փախցնելով հայոց Մոխրաթաղ գիւղը: Այստեղ նա իր սեպհական ծախքով բաւական ժամանակ պահեց և կերակրեց ռուսաց զօրքերին, մինչև նրանք նոր օգնութիւն ստացան, և Աբաս-Միրզայի անգին զօրութիւնը ցրիւ տալով, հալածեցին մինչև Երասխ գետի աջ կողմը: Այդ կռիվների ժամանակ մեծ քաջութիւններ գործեցին Մէլիք-Զումշուդը, Մէլիք-Բովչանը և Վանի իշխաչին:

Այնուհետև Վանի իշխաչին իր սեպհական հեծելախումբով մասնակցում էր ռուսաց զանազան

*) Այդ ժամանակն էր, որ Մէլիք-Բովչանը, ուտեստի պաշար հասցնելով, ազատեց նրանց սովամահ լինելուց, իսկ Մէլիք-Զումշուդը, Շուշի բերդից իր ձիաւորների խումբով վրա հասնելով, ազատեց նրանց իսպառ կոտորվելուց:

*) Զաֆար-Ղուլի-խանը Մամադ-Հասան-աղայի որդին էր, իսկ այդ վերջինը Շուշի բերդի Իբրահիմ-խանի որդին էր:

պէս սեպհականութիւն իր հայրենի Կասպատ գիւղը և չնորհեց մէլիքութեան տիտղոս: Նա կոչվելու այնուհետև Մէլիք—Վանի:

Զբաբերդի հին տիրապետող մէլիքների (Մէլիք-Խրայէլեանների) վերջին ժառանգները (Մէլիք-Ադամ II-ը) տեղափոխված լինելով Գանձակի գաւառը, իսկ նոր մէլիքների (Մէլիք-Ալլահվերդեանների) վերջին ժառանգը (Մէլիք-Բովչանը) տեղափոխված լինելով Նուխվայ գաւառը,—Զբաբերդը մնացել էր առանց մէլիքների կառավարութեան: Իր արժանաւորութիւններով Զբաբերդը կառավարելու և այդ գաւառը ժամանակի փոթորիկներից պահպանելու համար ընդունակ էր միայն Մէլիք-Վանին, և նա ստացաւ Մէհտի-խանից ամբողջ Զբաբերդի մէլիքութիւնը:

Մէլիք-Վանին իր պատերազմական արժանաւորութիւնների հետ ունէր և կառավարչական ընդունակութիւններ: Նա ամբողջ 42 տարի խաղաղութեամբ վարեց Զբաբերդի մէլիքութեան պաշտօնը, աշխատեց այդ երկրի ցրված բնակիչներին հետզհետէ վերադարձնել իրանց հայրենիքը և ծաղկացրեց երկրագործութիւնը ու արհեստը: Նա վախճանվեցաւ խորին ծերութեան մէջ (1854) և նրանից յետոյ Ամբաբէկեանների տոհմը աւելի և աւելի նշանակութիւն ստացաւ Ղարաբաղում *):

(Կը շարունակվի)

*) Մէլիք-Վանին թողեց չորս որդի՝ Յովսէփ-բէկ, Սարգիս-բէկ, Ամբա-բէկ (պօլկօվնիկ) և Միքայէլ-բէկ: Իսկ Մէլիք-Վանիի եղբայր Յակոբ իշխաչին ունէր մի որդի միայն՝ Ալան-բէկը, դրանից ծնվեցան՝ Ներսէս-բէկ, Մովսէս-բէկ և Նիկոլա-բէկ:

ամենայնիւ հարցը նրանումն է, արդեօք կարելի էր ուրիշ կերպ վարվել, քանի որ կօնֆերենցիան խոստովանվեցաւ, թէ եւրոպական միջամտութիւնը անհրաժեշտ կը դառնայ, եթէ սուլթան կը հրաժարվի վերականգնել „statu quo“ եգիպտոսի մէջ։ Պէտք է կարծել, որ մի եռանդոտ բողոքից յետոյ Բ. Դուռը չէզօք վկայ կը մնայ այն անցքերի, որոնց սկիզբը պէտք է համարել Ալէքսանդրիայի ռմբակոծութիւնը։

Այդ անցքերի բնաւորութիւնը մինչև անգամ մօտաւորապէս չէ կարելի որոշել, մինչև լուրեր չը սացվեն անգլիացիների յետագայ գործողութիւնների և այն դիրքի մասին, որ կը բռնի Պօրտ-Սայիդ հեռացած ֆրանսիական նաւատորմը։ Ներկայումս ակներև է միայն, որ Թիւրքիայի համար հասել է փորձանքների մի նոր շրջան։ Իսկ դրա պատճառն այն է, որ Թիւրքիան աշխատում է միշտ երկարացնել այն հարցերը, որոնց բարձրացնում են նրա եւրոպական հոգաբարձուները։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կայիրէից «Polit Corresp.» լրագրին գրում են յունիսի 27-ից։ Ալէքսանդրիայի մէջ պատահած ցաւալի ջարդից յետոյ այստեղ ոչինչ չէ պատահել, որ կարողանար նպաստել այն սարսափի տարածմանը, որ պատեց եւրոպացիներին։ Կարգապահութիւնը և հանգստութիւնը վերականգնված է։ Եգիպտական իշխանութիւնը մեծ խստութիւն է ցոյց տալիս և մանաւանդ Արաբի-փաշա, որ գոնէ ձեի համար կարճառօտ և հանգստացնող հրամաններ է տալիս և հսկում է միևնոյն ժամանակ, որ այդ հրամանները կատարվեն։ Այնուամենայնիւ դաղթականութիւնը չէ դադարում և Կայիրէից հեռանում են մինչև անգամ այնպիսի մարդիկ, որոնք առաջ ընդդիմանում էին փախուստին։ Վերջին ղէպքում դաղթում են ոչ թէ վտանգից երկիւղ կրելով, այլ այն երկիւղի պատճառով, որ ներշնչում է երկրի տնտեսական դրութիւնը, որովհետև առևտուրը և արդիւնաբերութիւնը կատարեալ ընկած են և կարողութիւն չունեցող մարդիկ չեն կարողանում իրանց համար ապրուստ և միջոցներ գտնել։ Պէտք է հայեացք գցել այն փողոցների վրա, որոնք տանում են դէպի երկաթուղիների կայարանները, համոզվելու համար, թէ որքան շատ մարդիկ են փախչում Կայիրէից։ Մի օրվայ մէջ երկաթուղու կայարանից 4,000 տոմսակներ էր տուած, իսկ յունիսի 18-ին Կայիրէից գնացողների թիւը հասաւ 15,000։ Երկրից փախչում են ոչ թէ միայն եւրոպացիները, այլ և լեվանտինները և Թիւրքերը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մէկ օրմանի վախճանը։ Փարիզից լրագրիներին հաղորդում են, որ իր ժամանակ Փարիզի բարձր հասարակութեան մէջ յուզմունք գցող և ամիսներով իր վրա խօսեցնող գործը շատ հասարակ կերպով վերջացաւ։ Երկու տարի առաջ, սմբողջ Սէն-Ժերմենի հրապարակը սաստիկ խռովված էր, երբ լուր տարածվեցաւ, որ Լօնդոնի Թիւրքաց դեսպանի որդին, գեղեցիկ Մուզուրուս-բէյն, յափշտակեց օրիորդ Բլանչ դ'Իմէկուրին, որովհետև այդ օրիորդի խիստ մայրը մերժեց Թիւրք երիտասարդի առաջարկութիւնը։ Իմէկուրների հարատ ընտանիքը Լօնդոնի և Փարիզի դաղանի պոլիցիայի օգնութեամբ ամեն միջոցներ գործ դրեց սիրահարներին բռնելու համար, որ և յաջողվեցաւ նրան։ Բլանչ դ'Իմէկուր, որ չուտով տիկին Մուզուրուս-բէյ դարձաւ, վերադարձվեցաւ իր մօրը, որը չտալեց նրան վանքը ուղարկել։ Իսկ երիտասարդ և գեղեցիկ Թիւրքը ենթարկվեցաւ ուղղիչ պոլիցիայի դատին։ Ֆրանսիական դատարանը այդ ամուսնութիւնը ապօրինի համարեց, և երիտասարդ Մուզուրուս-բէյի բոլոր ջանքերը՝ վերադարձնել իր կնոջը, իզուր էին։ Այժմ Փարիզից հաղորդում են, որ Բլանչ դ'Իմէկուր պսակվում է Բատտացիի որդի կոմս Սօլմի հետ։

***

Վիկտոր Հիւգո։ Փարիզի լրագիրները պատմում են, որ այս օրերս, հռչակաւոր բանաստեղծը, ճաշելով իր մօտիկ բարեկամների շրջանում, բաժակը ձեռքին դիմեց իր կողքին նստող Կոպպէին և ասեց. «Ինչ կը լինի, որ մենք, այստեղ ներկայ գտնվող երկու բանաստեղծներս, միմեանց կենացը խմենք։—«Ո՛հ, վարժապետ,—համեստութեամբ պատասխանեց Կոպպէ,—այստեղ միայն մէկ բանաստեղծ կայ։»—«Իսկ ես,—հարցրեց Հիւգօն իր նուրբ ժպիտով,—միթէ դուք ինձ չէք հաշուում։»

***

Նաւթի աղբիւրները Հարաւային Ամերիկայում։ Հիւսիսային-Ամերիկայի հիւպատոսը Բուէնոս-Այրէսում հաղորդում է, որ Արգենտինեան հանրապետութեան վերին մասում բացված են նաւթային հարուստ աղբիւրներ, բայց նրանց արդիւնահանելը, ճանապարհների վատութեան պատճառով, շատ դժուար է։ Իւի գաւառում նաւթի լիճ է գտնված, որի խորութիւնը դեռ չեն կարողացել քննել։ Գտնված նաւթը շատ լաւ տեսակիցն է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յուլիսի։ „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ հրատարակված է. Բեռազանի նահանգապետ Զիբին ներքին գործերի մինիստրութեան հողային բաժնի կառավարիչ է նշանակված, իշխան Կանտակուզին-Սպերանսկի օտար դաւանութիւնների բաժնի դիրեկտորի պաշտօնակատար է նշանակված։ Նորաձին Մեծ Իշխանուհու կնունքը նշանակված է յուլիսի 11-ին Պետերգոֆի մէջ։ Լրագիրները հաղորդում են. Զերնիի մօտ հողի փորելը չափազանց դանդաղ է գնում, թէպէտ շատ բանուորներ կան։ Շոգեկառքը բարձրացած է և այդ ժամանակ մի քանի բանուորներ վնասվել են։ Պէտք է կամ շատ երկարացնել աշխատանքները և այն ժամանակ մարմինները կը քայքայվեն, կամ մարմինները կտրել, հենց որ դուրս կը փորվեն նրանց մասերը։ Մարմինների հոտը հիմա էլ անտանելի է։ Դուրս են փորված ընդամենը 8 դիակներ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԷՐԷԹԻ ՀԱՅՈՑ վիճակային ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ մէջ նշանակված է ԱՅՈՒՐԴ 2-ին և կրկնաձուրդ 5-ին առաջիկայ ՕԳՈՍՏՈՍԻ կսպալաւ տալոյ համար հետևեալ էջմիածնապատկան կալուածները։ Ա., երեք կրպակ Բազազխանայում։ Բ., երեք կրպակ Նորաշէնի եկեղեցւոյ մօտ։ Գ., երկու և կէս կրպակ Քուրքչիխանայում։ Դ., մի կրպակ փռան Թաղում։ Ե., մի կրպակ Մէջին փողոցում։ Զ., մի երկյարկեայ տուն Մօղնւոյ Թաղում։ Է., միայարկ տուն փռան Թաղում։ Ը., միայարկ տուն կաթոլիկաց եկեղեցւոյ մօտ։ Թ., եռայարկ կալուած դաշտի խաչի։ Ուստի ցանկացողք կարող են նշանակեալ ժամանակին ներկայ գտնել։

1—3

Մի հայ ԵՐԻՏԱՍԱՐԴ որ մի քանի տարի առաջ երկար ժամանակ ծառայել է „Մշակի“ խմբագրութեան մէջ, որպէս ցրվողական ՑԱՆԿԱՆՈՒՄ է ունենալ մի որ և է ծառայութիւն։ Ցանկացողները կարող են իրանց հասցէն թողնել խմբագրութեան մէջ։

4—5

Պատիւ ունիմ յայտնել պատվելի հասարակութեանը որ Սօլօլակից տեղափոխվել եմ Գոլովինսկի պրոսպեկտի վրա Տրիդուլովի տունը և ամսիս 4-ից բացել եմ իմ կօնդիտերի և հացեղէնի մագազինս „Варшавская пекарня“ անունով, որտեղ ծախում եմ կօնֆիկտներ, պիրօժնի, պէչենի, մուրաբա, սուխարի, կուլիչ տօրտ, բուլկի, զանազան տեսակ հացեղէններ, և տաք պիրօժկէք, շատ ձեռնտու գներով, իսկ գաւառացի վաճառականներին մեծ զիջումով. նմանապէս ընդունում եմ ամենայն տեսակ կոնֆետեղէնի և հացեղէնի պատուէրներ աւելի արժան քան ուրիշները, այնտեղ ևս կարող են դիմել սօլիտերով հիւանդներ դեղ ընդունելու համար թէ անձամբ և թէ գրաւոր։

ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆՑ

1—10

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

Ներսիսեան դպրանոցի բարձր դասատան աշակերտներից մինը կամենում է պատրաստել աշակերտներ և աշակերտուհիներ՝ բոլոր Հայ դպրոցների ստորին և միջին դասատանց համար։ Ցանկացողք թող դիմեն Յովհաննովի կարվանսարայում պ. Գրիգոր կակեանի խանութը № 1.

Въ Редакціи газеты «МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսումն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ։

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

Մի հայ ԳԱՐՏԻԶՊԱՆ (Բաղմանչի)

Աւետիս ԱՐԱՄԵԱՆՑ Վասպուրականի ՎԱՆ քաղաքից

Կուզենար պարտիզպանի տեղ գտնել Թիֆլիսում

Բնակվում է ՍԱՂԻ վրա Դիմիտրի Չիկվիանիի տանը, № 58.

САДОВНИКЪ

Армянинъ, Аветисъ Арамянцъ изъ ВАНА (Турецкой Арменіи).

Желаетъ имѣть мѣсто садовника въ Тифлисѣ.

Спросить на Пескахъ домъ Димитрія Чиквіани № 58

5—5

Միջի փողոց, Կաթոլիկէսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սունդուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ըէվոլվերի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կօֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիրի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. իբօր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ութոներ, Բրիտանսկի չայնիկնե պրֆէսնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր՝, կաֆկրամալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի մաքրելու, ներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետ , կանվերտաթանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ախտակ, թանաք, և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու ֆրուժէ, վարշավի միչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.— 45 կ.—5 ր., չուսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տես 12 ր. ջուխտ, պոլնանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, ակ, դուլբաններ կատիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի մարդկերանց դալուսմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի,և շոքի. սանդրեր շիրկարաի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շորի, սապոնի, պոլի և չատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ շալէ (гарусъ) ֆէլ- և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն , պապիրոսի ամաններ կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, տեսակ 3 կ.,—30 կ., ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։ Հոտավէտ պարաշոկներ

Վաճառականներին առանձին պայմաններ

Բանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտրով և զիջումով վերոյիշեալ ապՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) մէջի նվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԻԵՆՈՒՄ № 13. փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

88—180

Միջի փողոց, Կաթոլիկէսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Іюля 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Мелик. ул., д. каз.